

Վերջինս թույլ կտա վերարտադրողական տարիքում նվազագույնի հասցնել մանկածնման ֆունկցիայի խանգարումները, անպտղության ցուցանիշները, իսկ «կենսաբանական ժամացույցի» գնահատման արդյունքում՝ մշակել անհատական վարման պլան: Վերջին տարիներին դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական առողջության պահպանությունը դարձել է բժշկասոցիալական առաջնահերթ հիմնախնդիր ողջ աշխարհում՝ պայմանավորված բնակչության վերարտադրողական ֆունկցիայի անկման հետ՝ ավելի ու ավելի սևեռելով հետազոտողների ուշադրությունը վերարտադրողական ֆունկցիայի պահպանման նպատակով օժանդակ տեխնոլոգիաների կատարելագործմանը: Ատենախոսական աշխատանքի համար ընտրված հորմոնալ, փոքր կոնքի և վահանաձև գեղձի գերձայնային հետազոտությունների իրականացումը լիովին բավարարում է հետազոտական աշխատանքի նպատակին: Ուսումնասիրված են նաև սեռական և արտասեռական հիվանդությունները: Ընդգծվում է նաև բժշկական աշխարհագրության և առողջության միջև կապը՝ կարևորելով շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը դեռահասի առողջության վրա:

Գիտական աշխատանքի եզրակացությունը և առաջարկությունները

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել Երևան քաղաքի և ՀՀ մարզերի 13-18 տարեկան 417 դեռահաս աղջիկներ: Հետազոտության բազա են հանդիսացել «Բեզլարյան» ԲԿ-ն, «Ուիզմոր» Քլինիքը: Հետազոտությունն իրականացվել է դեռահասի, նրա ծնողի կամ խնամակալի կողմից տեղեկացված համաձայնության հիման վրա: Հետազոտության կազմակերպման ծրագիրը քննարկվել և երաշխավորվել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի էթիկայի կոմիտեի կողմից: Դեռահասների հետազոտության մեջ ներառման համար եղել են համապատասխանության չափանիշներ: Հետազոտությունը կատարվել է դեպք-ստուգիչ դիզայնով: Դաշտանային ցիկլի խանգարումների հիմքում ընկած գինեկոլոգիական հաճախ հանդիպող հիվանդությունների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հետազոտվող դեռահասները բաժանվել